ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Տեքստի հետ աշխատելու մեթոդները մայրենիի դասաժամին

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Ալինա Միքայելյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գորիսի թիվ 3 հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….3

Միջառարկայական կապերի դերը մայրենիի դասերին…….5

Միջառարկայական կապերի միջոցով կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացումը……7

Միջառարկայական կապերի դերը մայրենիի և հարակից առարկաների դասերին…8

Եզրակացություններ…….15

Օգտագործած գրականության ցանկ…….16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Վերջին ժամանակներս զգալի աշխատանք է կատարվել դպրոցում դասին ներկայացվող ժամանակակից պահանջները փոփոխելու, ուսուցման գործընթացում նոր ու արդյունավետ մեթոդներ կիրառելու ուղղությամբ: Ավելի հաճախ են կազմակերպվում դասապրոցեսներ, որտեղ համակցվում են ուսուցման արդյունավետ մեթոդներ և գործադրվում են նոր ու արդյունավետ հնարներ, որոնք մեծապես նպաստում են ուսումնական խնդիրների կենսագործմանը և առաջին պլան են մղում դասապրոցեսի առաջնակարգ պահանջները:

Այդ ընթացքում ուսուցչի ուշադրության կենտրոնում պետք է լինեն նաև միջառարկայական կապերի ապահովման, մեթոդական հանձնարարականների կատարման, ուսումնական ինֆորմացիայի հաղորդման, գրավիչ մուտքի ապահովման հարցերը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու ձևերի ու միջոցների ընդհանուր համակարգում իրենց ուրույն դերն ունեն միջառարկայական կապերը, որոնք վերջին տարիներին էլ ավելի են գրավում մեր տեսաբան ու պրակտիկ մանկավարժների ուշադրությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ցույց տալ միջառարկայական կապերի բազմազանությունը ուսուցման գործընթացում և, որ տվյալ հասկացության էությունը չի կարող սահմանվել միանշանակորեն, միջառարկայական կապերի երևույթների բազմաստիճան լինելը, որ նրանք չեն սահմանափակվում բովանդակության, մեթոդների, ուսուցման կազմակերպման ձևերի շրջանակներում, տվյալ հասկացության իմաստային նշանակությունների կարգավորումը, ինչպես նաև միջառարկայական կապերի տեսակների կանոնավորումը:

Նպատակից ելնելով՝ **առանձնացրել ենք հետևյալ խնդիրները՝**

- Ցույց տալ միջառարկայական կապերի տեղն ու դերը ուսուցման գործընթացում
- Միջառարկայական գիտելիքների, կարողությունների և էական առնչությունների ձևավորման արդյունավետությունը ուսուցման

գործընթացում որոշել միջառարկայական կապեր իրականացնելու կարողությամբ:

Հետազոտության տեսական նշանակությունն է ներկայացնել, որ միջառարկայական գիտելիքների, կարողությունների և էական առնչությունների ձևավորման արդյունավետությունը աշակերտների մոտ որոշվում է ուսուցման գործընթացում նրանց կողմից միջառարկայական կապեր իրականացնելու կարողությամբ:

Հետազոտության գործնական նշանակությունն է ցույց տալ բազմակողմանի միջառարկայական կապերի իրականացմամբ մշակվում է մանկավարժական գլխավոր ուղղություն, համընդհանուր ավանդույթ, ուսուցչի գործունեության ռազմավարություն:

Միջառարկայական կապերի միջոցով կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացումը

Լեզուն գիտությունների բանալին է, մարդու ամենազորեղ զենքը։ Հին իմաստուն խոսք է՝ ինչ չի արվում թրով ու սրով, արվում է գրով ու խոսքով։Լեզվի և միմիայն լեզվի միջոցով են մարդիկ գիտելիքներ ձեռք բերում։ Մարդ որքան լավ տիրապետի իր մայրենի լեզվին, այնքան շատ գիտելքներ կարող է ձեռք բերել։

Լեզվի ուսուցման հիմքում տեսականն ու գործնականը պետք է սերտ շաղկապված լինեն, որպեսզի տեսական նյութի յուրացումը կատարվի գործնական աշխատանքի միջոցով։ Եվ որպեսզի երեխային նախապատրաստենք կյանքին, ձևավորենք տվյալ ժամանակաշրջանին հասարակության լիարժեք մարդ, պետք է ուսուցման գործընթացն այնպես կազմակերպել, որ նրանք պասիվ մասնակցից դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցներ։ Այդպիսի դասերին սովորողների մոտ ձևավորվում են ճանաչողական հետաքրքրություններ, կարողություններ։

Կրթության համակարգում մեծ է մայրենի լեզվի դերը երեխայի անձի ձևավորման, մտավոր առաջընթացի, վերլուծական և պատկերավոր մտածողության զարգացման, նաև՝ մյուս առարկաների ընկալման և յուրացման համար։

Ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է առարկաների միջև կապի դրսևորմանը։ Այդպիսի միջոցներ են համակարգչային մոդելավորող ուսումնական ծրագրերը, անիմացիաները, էլեկտրոնային պաշարները։ Որպեսզի ՏՀՏ այս միջոցները տան ցանկալի արդյունք, անհրաժեշտ է ապահովել դրանց կիրառության մեթոդիկան։

Ըստ Կոմենսկու՝ «Ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև կապը»։

Միջառարկայական կապերը նպաստում են տարբեր ուսումնական թեմաների միջև տրամաբանական կապերի ստեղծման։

Միջառարկայական կապերի ապահովումը ժամանակակից ուսման հիմնական պահանջներից մեկն է, որ փոխադարձաբար նպաստում է տարբեր առարկաների ուսուցման որակի և արդյունավետության բարձրացմանը։

Ռուս ականավոր մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին միջառարկայական կապերի ստեղծումն ու կենսագործումը համարում է արդյունավետ ուսուցման կարևորագույն նախապայմաններից մեկը։ Նա կրթության ու ուսուցման գործում առաջնակարգ տեղ է հատկացնում մայրենի լեզվին՝ որպես երեխայի մտավոր զարգացման բնական գործոնի։

Մանկավարժության մեջ միջառարկայական կապերի հիմնահարցին անդրադարձել են նաև Պեստալոցին, Հերբարտը, Խ. Աբովյանը և ուրիշներ գերազանցապես ճանաչողական առումով՝ միջառարկայական կապերի իրականացումը համարելով ուսուցման բարելավման կարևոր միջոց։

Միջառարկայական կապերը դրդում են սովորողներին հետազոտական գործունեության, արթնացնում հետաքրքրություն առարկայի նկատմամբ։ Միջառարկայական կապերը պետք է օգտագործվի միայն այն ժամանակ և այն չափով, որ չափով որ կկապվի նյութի հետ և կօգնի նյութի խոր ու բազմակողմանի յուրացմանը։ Միջառարկայական կապերի օգտագործումը երբեք ինքնանպատակ չպետք է լինի, այլ միայն միջոց՝ հիմնական նպատակին հասնելու համար։ Միջառարկայական կապերի միջոցով ապահովում է երեխայի ոչ միայն լավ կարդալու, գրելու և խոսելու կարողություններ, նաև՝ աշխարհաճանաչողական շատ տեղեկություններ ունենալ շրջապատի մասին, գնահատելու գեղեցիկը, լավն ու բարին։

Կրտսեր դպրոցում մայրենի լեզվի խնդիրը խոսքային հմտությունների, կարդալու կարողությունների զարգացումն է։ Իսկ սովորողը կարդում և գրում է անընդհատ, բոլոր դասերին։ Մայրենի լեզվի ուսուցումը պետք է սովորողին հնարավորություն տա.

_անկաշկանդ և գրագետ, գրավոր և բանավոր արտահայտել սեփական մտքերը, զգացմունքները

_կառուցել ճիշտ և փաստարկված խոսք

զարգացնել լեզվական ստեղծագործական երևակայությունը։

Մաթեմատիկան տարրական դասարանների մայրենիի դասերին

Մաթեմատիկայի իմացությունը մեծ դեր ունի բնագիտական, տեխնիկական գիտելիքների ձեռքբերման և խորացման գործում։

Մաթեմատիկան՝ որպես համամարդկային մշակույթի բաղադրիչ է։ Մաթեմատիկան սովորողի մեջ դաստիարակում է նախաձեռնողականություն, դժվարություններ հաղթահարելու կամային որակներ, ինքնուրույն, սոցիալապես ակտիվ անհատ։

Մաթեմատիկական գիտելիքների իմացությունը նպաստում է գործնականում կիրառելու հմտություններ։

Մայրենիի դասերին հաճախ ենք հանդիպում այնպիսի առաջադրանքների, որ անպայման պետք է իմանանք մաթեմատիկա, ունենանք այն կիրառելու կարողություններ և հմտություններ։

Մայրենի 4_ Ուզում ես ավելին իմանալ.

Առնչվում ենք 1500 տարի, 1974 թվական,1975 թվական, 50 մ երկարություն։ Սովորողները պետք է ճիշտ կարդան թվերը և կատարեն համեմատություններ։

Մայրենի 3

Թեման՝ Աշխարհի լեզուները

Օգտագործում ենք 5000, 42, 800միլիոն, 320 միլիոն, 250 միլիոն, 190 թվերը։

Մայրենի 4

Թեման՝ Ուզում ես ավելին իմանալ

Մասիսի բարձրությունը՝ հինգ հազար հարյուր վաթսունհինգ մետր է, Սիսի գագաթը՝ երեք հազար ինը հարյուր քսանհինգ մետր։ Նրանց գագաթների հեռավորությունը

տասը կիլոմետր է: Նշված թվերը գրում ենք թվանշաններով և գտնում, թե Մեծ Մասիսը քանի՞ մետրով է բարձր Փոքր Մասիսից:

Մայրենի 2

Թեման՝ Երեք արջի հեքիաթը

Սովորողները նշում են միանիշ թվերը, ասում կազմությունը, զույգ են, թե կենտ, մեկը մյուսից քանիսով է մեծ կամ փոքր, ինչպես ստանալ տրված թվի նախորդը և հաջորդը:

Այսպիսով,այս դասերին սովորողը դիտարկում է, կռահում, ձևավորվում է եզրակացություններ անելու կարողություններ, ձեռք է բերում սեփական ուժերի նկատմամբ վստահություն, ստացած գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան տարրական դասարանների մայրենիի դասերին

Բնության մասին մայրենիի դասագրքերում շատ թեմաներ կան: Այդ դասերի միջոցով երեխաները կապվում են բնության հետ, զգում բնության գեղեցկությունները: Բնությանը վերաբերող նյութերի ուսուցումը պետք է սկսել դիտարկել կենդանի բնությունից. արդյունքները գրանցել, ուսումնական արշավների ժամանակ տեսածը պատմել, ներկայացնել, հարցադրումներ անել: Հետևություններ և դատողություններ անել բնության մեջ կատարվող երևույթների, փոփոխությունների վերաբերյալ: Ներկայացնել բնության մեջ որոշ երևույթների առաջացման պայմաններն ու պատճառները՝ ամպ, անձրև, կարկուտ, ձյուն, դեղնած տերևներ նայլն:

Մայրենի 3

Թեման՝ Տերևաթափ

Դպրոցամերձ այգում կատարել դիտարկումներ, ուսումնասիրել՝ տերևը ինչ ձև, գույն, չափս ունի: Հարցադրումների միջոցով պարզել, թե ինչու և երբ են տերևները դեղնում և թափվում, տարվա որ եղանակին ծառերը նորից կտերևակալեն և ինչ գույն կունենան և այլ հարցեր: Հավաքած տերևներով ձևավորել աշնանային մի տեսարան:

Մայրենի 3

Թեման՝ Կարկուտը

Սովորողներն իմանում են, թե ինչպես են առաջանում ամպերը, անձրևը, կարկուտը, ձյունը: Տեղեկացնել, որ երկրի վրա եղած ջրի ընդհանուր քանակը չի փոխվում և անընդհատ շարժման մեջ է: Օվկիանոսներից, ծովերից, լճերից... ջուրը գոլորշիանում է մթնոլորտի վերին շերտերում և խտանալով առաջացնում է ամպ, որն էլ կախված եղանակից, անձրևի, կարկուտի, ձյան տեսքով թափվում է ցած:

Այսպիսով՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի և «Մայրենիի» կապը նպաստում է սովորողի խոսքի զարգացմանը, նաև իմանում է բնության մեջ կատարվող երևույթների պատճառները:

«Կերպարվեստը» տարրական դասարանների մայրենիի դասերին

«Կերպարվեստ» առարկայի նպատակն է զարգացնել սովորողի երևակայությունը, ստեղծագործական, պատկերավոր մտածողությունը, դիտողականությունը, ուշադրությունը:

Ձևավորվում է գեղեցիկը և ներդաշնակը տեսնելու, զգալու, գնահատելու, պահպանելու ցանկություն ու կարողություն:

Մայրենիի դասագրքերն ունեն գեղեցիկ ձևավորում, հարուստ են գունավոր նկարներով, որոնք էլ երեխաների մեջ առաջացնում են գեղագիտական ճաշակ:

«Այբբենարան» դասագրքի բոլոր էջերը նկարազարդ են՝ համապատասխան թեմային: Քանի որ սովորողները նախայբբենական շրջանում տառերը չգիտեն, բնականաբար չեն կարող կարդալ, դասերը կարդում են նկարների միջոցով:

Մայրենի 4

Թեման՝ Սարյանի նկարներում շողշողում է Հայաստանի հավերժությունը

Սովորողները ծանոթանում են Սարյանի կյանքին, ստեղծագործական գործունեությանը, նկարներին, բնանկարներին: Իմանում են, որ Սարյանը ստեղծել է դիմանկարներ, բնանկարներ, նատյումորտներ, ձևավորել է գրքեր: Տեղեկանում են, որ Սարյանի տուն_ թանգարանը գտնվում է Երևանում՝ իր անունը կրող փողոցի վրա, որ նրա արձանը քանդակել է Լևոն Թոքմաջյանը: Ծանոթանում են նաև հայտնի այլ նկարիչների հետ:

Դասի ընթացքում սովորողներն օգտագործում են նկարչական տերմիններ: Նրանց հանձնարարվում է նկարել աշնանային գողտրիկ մի տեսարան՝ օգտվելով գույների խառնուրդից: Նրանք

կարողանում են թվել տաք և սառը գույները, բացատրել գույների նշանակությունը, ուշադրություն դարձնել գույների խորհրդանշական նշանակությանը, նաև՝ ինչպես երկու տարբեր գույներից ստանալ մեկ գույն:

Այսպիսով՝ մայրենիի և կերպարվեստի միջառարկայական կապը սովորողի գեղագիտական ճաշակի զարգացման, ինքնուրույն մտածողության, բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման միջոց է:

«Տեխնոլոգիան» տարրական դասարանների մայրենիի դասերին

«Տեխնոլոգիա» առարկան հանրակրթության բաղկացուցիչ մասն է, որը սովորողներին զինում է կենցաղում անհրաժեշտ գիտելիքներով:Այն նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորում է բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ, նախապատրաստում նրան ինքնուրույն կյանքի:

Սովորողը գունավոր թղթով, կտորով, պլաստիլինով պատրաստում է իր սիրած հեքիաթի հերոսներին: Սովորողները սկսում են մեկը մյուսին հարցեր տալ՝ որ հեքիաթի հերոսներն են, ինչու են ընտրել տվյալ գույները, հեքիաթի որ հերոսն է իրեն դուր գալիս, ինչպես է ավարտվում հեքիաթը, ինչպես կցանկանայիր ավարտվեր հեքիաթը:

Մայրենի 4

Թեման՝ Եղեգը, որը շատ էր ուզում դառնալ սրինգ

Երեխաներն իմանում են, ինչ է եղեգը, սրինգը, շոշափում են, ասում են ինչ գույն, ձև ունի եղեգը, որտեղ է աճում, բացի սրինգից ուրիշ էլ ինչ են պատրաստում եղեգից՝ զամբյուղ, խսիր, կտուրի ծածկ:

Այսպիսով՝ մայրենիի և տեխնոլոգիայի միջառարկայական կապերի շնորհիվ աշակերտները ծանոթանում են նոր բառերի,

հարստանում է նրանց բառապաշարը, կարողանում են իրենց ստացած գիտելիքները կիրառել առօրյայում:

«Երգ_երաժշտությունը» տարրական դասարանների մայրենիի դասերին

Գեղեցիկը տեսնելու, զգալու կարևոր միջոցներից է երգն ու երաժշտությունը։

«Մայրենիի» դասագրքում շատ բանաստեղծություններ նաև երգեր են։ Նշանակում է երգը մայրենիի դասերի բաղկացուցիչ մասերից է։ Այն դասը դարձնում է հաճելի, գեղեցիկ, անմոռաց։ Դասը երաժշտությամբ ավարտելը նպաստում է երեխաների հոգնածությունը ցրվելուն, աշխուժացնելու, նաև՝ նյութն ամրապնդելու համար։ Այն երեխայի մեջ զարգացնում է գեղագիտական ճաշակ։ Սովորողները ծանոթանում են երաժշտական մի շարք գործիքների հետ, առանձնացնելով փողային, լարային, հարվածային և ստեղնաշարային նվագարանները։

Մայրենի 4

Թեման՝ Կաքավիկ

Ներկայացնում են Կոմիտասի կյանքն ու գործունեությունը, նրա ստեղծագործությունները։ Ունկնդրում և երգում են «Կաքավիկ»

երգը։ Ծանոթանում են նաև հայ հայտնի երգահաններ Ա,Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի և ուրիշների ստեղծագործություններին։

Այսպիսով՝ մայրենիի և երգ_երաժշտության միջառարկայական կապը նպաստում է կրտսեր դպրոցականի գեղեցիկի աշխարհ ներթափանցելուն, դասի հանդեպ հետաքրքրության ավելացմանը, նաև՝ բառապաշարի հարստացմանն ու խոսքի գեղեցկացմանը։

«Շախմատը» տարրական դասարանների մայրենիի դասերին

Շախմատը զարգացնում է երեխայի տրամաբանական մտածողությունը։

Մայրենի 4

Թեման՝ «Շախմատ»

Սովորողներն ամրապնդում են իրենց գիտելիքները շախմատի մասին։ Իմանում են, որ նախկինում շախմատի փոխարեն գործածել են «ճատրակ» բառը, որը թարգմանվում է քառանդամ կամ չորեքմասնյա, որ խաղը հնարել են Հնդկաստանում։

Սովորողները պլաստիլինից ծեփում են շախմատի քարեր և ներկայացնում յուրաքանչյուր քարի քայլերը։

Հավաքում են տեղեկություններ հայ հայտնի շախմատիստ Տիգրան Պետրոսյանի մասին։

Այսպիսով՝ շախմատի և մայրենիի միջառարկայական կապերի շնորհիվ սովորողները նոր բառեր են սովորում և հարստացնում իրենց բառապաշարը։

«Ֆիզկուլտուրան» տարրական դասարաններում մայրենիի դասերին

Տարրական դպրոցի աշակերտների համար դասերին հեշտ չէ երկար ժամանակ ուշադրության կենտրոնացում, քանի որ նրանց բնորոշ են անկայուն նյարդային գործընթացները։ Հոգեբաններն ու ֆիզիոլոգներն ապացուցել են, որ ձեռքերի դաստակների զարգացումը կարևոր նշանակություն ունի երեխայի գլխուղեղի ձևավորման և խոսքի զարգացման գործում։Հետևաբար, կարևոր է տարրական դասարաններում սովորողների շարժողական ակտիվության բարձրացումը։ Ուստի դասաժամերը հնարավոր չէ կազմակերպել առանց ֆիզկուլտ_ դադարների։ Յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող և վերականգնող վարժությունների և խաղերի անցկացմանը՝ ֆիզկուլտ_ րոպեներ, ֆիզկուլտ_ դադարներ և խաղեր։ Ֆիզկուլտ_ դադարներն անց են կացվում երաժշտության ուղեկցությամբ, երգելով և այլն, որպեսզի ապահովվի սովորողի հետաքրքրությունը ֆիզկուլտ_ դադարի կատարման նկատմամբ։

Ինքնուրույն ընթերցանության նյութեր_3

Թեման՝ Անօրինակ սխրանք

Երեխաները ծանոթանում են Յուրի Վարդանյանի կենսագրությանը, նրա անօրինակ սխրանքին։ Ծանոթանում են նաև հայ հայտնի ուրիշ սպորտսմենների, ոգևորվում սպորտում նրանց ձեռք բերած հաջողություններով։

Իմանում են տարբեր սպորտաձևերի մասին։

Այսպիսով՝ մայրենիի և ֆիզկուլտուրայի միջառարկայական կապերը նպաստում են սովորողի առողջ ապրելակերպին, հարստացնում բառապաշարը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջառարկայական կապերի օգտագործման մասին վերջին տարիներին շատ է գրվում ու խոսվում, սակայն ընդհանուր խոսակցությունն ու դատողություններն ավելի շատ են, քան կոնկրետ մշակումները, որոնք հնարավորություն կտան ուսուցչին որոշակի պայմաններում, որոշակի ձևով ու չափով ուսուցման գործընթացում կիրառելու այդ մեծ ու անփոխարինելի հնարավորությունը: Եվ, իհարկե, ժամանակն է, որպեսզի մանկավարժներն ու մեթոդիստները խոսքից գործի անցնեն և յուրաքանչյուր ուսումնական առարկայի գծով ցույց տան միջառարկայակն կապերի գործադրման հնարավորություններն ու ձևերը, որոնց գործնական նշանակությունը և կիրառման գործակիցը շատ ավելի բարձր կլինի:

Միջառարկայական կապեր օգտագործվող դասերին պետք է առաջադրվեն հետևյալ դիդակտիկական պահանջները.

1. Միջառարկայական կապերով դասը պետք է ունենա հստակ ձևավորված ուսումնաճանաչողական խնդիր, որի լուծման համար անհրաժեշտ են տարբեր առարկաներից գիտելիքների ներգրավում:
2. Միջառարկայական կապերով դասի ընթացքում պետք է ապահովվի սովորողների բարձր ակտիվությունը ուրիշ առարկաներից գիտելիքների կիրառման համար:

Ուսուցչից չի պահանջվում իր շարադրանքում կրկնել այլ առարկայի ուսումնական նյութը: Միջառարկայական կապերի նպատակը կայանում է նրանում, որ ուսուցման ընթացքում սովորողները կարողանան ինքնուրույն կիրառել տարբեր առարկաներից ստացած գիտելիքները նոր խնդիրների լուծման համար:

3. Միջառարկայական կապերի իրականացումը պետք է ուղղված լինի դեպի պատճառ-հետևանքային կապերի և ուսումնասիրվող երևույթի էության բացահայտումը:

4. Միջառարկայական կապերով դասը պետք է պարունակի աշխարհայացքային, ընդհանրական բնույթի հետևություններ, որոնք գործածվում են տարբեր առարկաներից ստացված գիտելիքների կապերում:
5. Միջառարկայական կապերով դասը պետք է աշակերտների մեջ մշակի դրական վերաբերմունք, արթնացնի հետաքրքրություն նրանց մեջ՝ գիտակցելու տարբեր առարկաների գիտելիքների միջև կապերը:

Դրան կարելի է հասնել.

- կապեր հաստատելով միջառարկայական, ճանաչողական խնդիրների և աշակերտների կյանքի, պրակտիկ գործունեության միջև
- միջառարկայական բովանդակությամբ հաշվողական խնդիրների լուծման միջոցով
- միջառարկայական հիմքի վրա պրակտիկ, լաբորատոր, ինքնուրույն աշխատանքների իրականցմամբ
- տարբեր առարկաների դասերին օգտագործվող զննական պարագաների, գիտա-հանրամատչելի լրացուցիչ գրականության, որը բացահայտում է ժամանակակից գիտության նվաճումները, օգտագործմամբ:

Գլխավորը տարբեր առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրության առաջացումն է, նրանց զարգացումը և ամրակայումը սովորողների հետ անհատական աշխատանքի պրոցեսում:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավոյան Հ. Մ., Սարգսյան Ռ.Վ., Ուսուցման պրոցեսի կատարելագործման խնդիրները, Երևան, «Լույս» 1981թ:
2. Հայ մանկավարժներ, գիրք Ա. Երևան 1958թ.:
3. Մելքումյան Մ. Ս., Միջառարկայական կապերի պրոբլեմը և հայրենասիրության դաստիարակումը, Երևան, «Լույս» 1973թ.:
4. Մելքումյան Մ. Ս, Թեզիսներ՝ «Նյութեր տարրական կրթության հարցերին նվիրված հանրապետական խորհրդակցության», Երևան 1973թ.:
5. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Ուսուցումը առաջին դասարանում, Երևան, «Լույս» 1983թ.:
6. Տեր-Գրիգորյան Ա. Ե, Ուսուցումը երկրորդ դասարանում, Երևան, «Լույս» 1985թ.:
7. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Միջառարկայական կապերի օգտագործումը տարրական դասարանների հայոց լեզվի դասերին, «Սովետական մանկավարժ» 1966, № 7:
8. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին, Երևան 1986թ.:
9. ՈՒշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1949թ.:
10. Կոմենսկի Յա. Ա., Մեծ դիդակտիկա,Երևան,1962: